Ճապոնական գրականություն, Արձակ, Պատմվածք
Թարգմանիչ՝ Նորայր Ադալյան

Ռյունոսկե Ակուտագավա
Թավուտում

ԹԵ ԻՆՉ ԱՍԱՑ ՓԱՅՏԱՀԱՏԸ ԴԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԻ ՄՈՏ, ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ճիշտ այդպես: Ես եմ գտել դիակը: Այսօր առավոտյան, սովորականի պես, ծառ կտրելու նպատակով ես ավելի հեռու լեռները գնացի: Եվ հանկարծ լեռան ստորոտի անտառում մի դիակ տեսա: Ասում եք՝ որտե՞ղ: Յամասինա տանող բանուկ ճանապարհից մոտավորապես չորս-հինգ տյո[1] հեռավորության վրա: Դա անմարդաբնակ մի վայր է, որտեղ բամբուկ է աճում ու մեջ-մեջ էլ մատղաշ կրիպտոմերիաներ:

Դիակի հագին կար բաց կապույտ սույկան[2] և կիսամաշ էբոսի գլխարկ[3], նրանից, որ դնում են մայրաքաղաքում: Նա պառկած էր մեջքին: Այ թե մաքուր գործ է՛ր. մարմնի վրա միայն մի վերք կար. այն էլ ճիշտ կրծքին, իսկ շուրջը թափված բամբուկի չոր տերևները կարծես կենաբարով էին ներծծված: Ոչ, էլ արյուն չէր հոսում: Վերքը երևի արդեն չորացել էր: Հա, մի բան էլ ասեմ, որ վերքի վրա, իմ քայլերից բոլորովին չանհանգստացած, նստել էր մի բոռ:

Ասում եք սուսեր կամ նման որևէ բան չկա՞ր: Ոչ, այնտեղ ոչինչ չկար: Միայն կրիպտոմերիայի բնի մոտ, որտեղ դիակն էր, մի պարան էր ընկած: Եվ մեկ էլ... հա՛, հա՛, բացի պարանից կար նաև մի սանր: Պարանից և սանրից բացի դիակի մոտ էլ ոչինչ չկար: Իսկ խոտն ու թափված տերևները չորս կողմը տրորված էին, երևի սպանվածը կյանքը էժան չէր տվել: Ի՞նչ, արդյոք ձի չի՞ եղել: Ախր այնտեղ ոչ մի ձի էլ չի հասնի: Ձիու ճամփան ավելի հեռու է, անտառի հետևը:

ԹԵ ԻՆՉ ԱՍԱՑ ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿ ԿՈՒՍԱԿՐՈՆԸ ԴԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Սպանվածին ես երեկ եմ հանդիպել: Երեկ... կարծես թե կեսօրին: Որտե՞ղ: Սեկիյամայից Յամասինա տանող ճանապարհին: Ձի նստած մի կնոջ հետ նա գնում էր Սեկիյամա: Կինը ծածկոցով լայնեզր գլխարկ էր դրել, այնպես որ նրա դեմքը ես չտեսա: Երևում էր միայն խագիի[4] ծաղիկների բանվածքով մետաքսյա շրջազգեստը: Ձին շիկավուն էր, խուզած բաշով: Հասա՛կը: Սովորականից մոտավորապես չորս սուն բարձր... Ես ախր կուսակրոն եմ,

---

[1] Տյո – երկարության չափ. հավասար է 109 մետրի:
[2] Սույկան – կիմոնոյի տեսակ:
[3] Բարձր, փափուկ գլխարկ, որ կրում էին ազնվականները:
[4] Խագի – ճապոնական պոեզիայում առանձնապես սիրված ծաղիկներից մեկը:

այդպիսի բաներից գլուխ չեմ հանում: Տղամարդու մո՛տ... այո, նրա մոտ սուր կար՝ գոտուց կախ, իսկ մեջքին՝ նետ ու աղեղ: Հիմա էլ լավ հիշում եմ, թե ինչպես սև լաքած կապարճից մոտ քսան նետ էր դուրս ցցվել:
Նույնիսկ մտքովս էլ չէր անցել, որ այդպես կվերջանար: Ճշմարիտն ասած, մարդկային կյանքը անհետանում է վայրկենաբար, ինչպես ցողը, ինչպես կայծակը: Ա՛խ, ա՜խ, անկարելի է ասել, թե այս ամենը ինչքան ցավալի է:

ԹԵ ԻՆՉ ԱՍԱՑ ՊԱՀԱՊԱՆԸ ԴԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԻ ՄՈՏ, ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Այս մա՞րդը, որին ես բռնել եմ: Սա նշանավոր ավազակ Տաձյոմարան է: Երբ ես սրան բռնեցի, ձիուց վայր ընկավ և տնքալով պառկեց քարե կամուրջի վրա, այն կամուրջի, որը Ավադագուտայի մոտ է գտնվում: Ե՞րբ: Երեկ գիշեր, առաջին պահակության ժամին: Անցյալ անգամ, երբ մազ էր մնացել, որ նրան բռնեի, հագին նույն կապույտ սույկանն էր և գոտուց կախած սուրը: Իսկ այս անգամ, ինչպես տեսնում եք, նրա մոտ նետ ու աղեղ էլ կա: Ահա թե ինչ: Դրանք սպանվածի մոտ եղածնե՞րն են: Դե, այդ դեպքում, անկասկած, սպանությունը կատարել է Տաձյոմարան: Աղեղը, կաշեպատ, սև լաքած կապարճը, բազեի փետուրներով տասնյոթ նետերը, բոլորը, ուրեմն, պատկանելիս են եղել սպանվածին: Այո, ձին, ինչպես բարեհաճեցիք ասել, շիկավուն էր, խուզված բաշով: Երևի այնպես էր վիճակվել, որ ձին նրան թամբից ցած գցի: Կամուրջից ոչ հեռու ձին խոտ էր պռճոկում, և հետևից քաշ էին գալիս երկար երասանները:
Այս նույն Տաձյոմարան, որ նման չէ մայրաքաղաքում թրևող մյուս ավազակներին, կանանց համար մեռած է: Հիշո՞ւմ եք, անցյալ տարի լեռան վրա, Բինձուրային նվիրված Ակիտորիբե տաճարի հետևում, մի կնոջ սպանեցին աղջկա հետ, ըստ երևույթին ուխտագնացներից: Ասում էին, որ դա նրա ձեռքի գործն է: Ահա և այս կինը, որ գնում էր շիկավուն ձիով: Եթե Տաձյոմարան է սպանել տղամարդուն, ապա ո՞ւր է կորել կինը, ի՞նչ է պատահել նրան: Անհայտ է: Ներեցեք, որ խառնվում եմ ձեր գործերին, բայց հարկավոր է դա հետաքննել:

ԹԵ ԻՆՉ ԱՍԱՑ ՊԱՌԱՎԸ ԴԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Այո, այս դիակը այն նույն մարդունն է, որի հետ ամուսնացած էր իմ աղջիկը: Միայն թե նա մայրաքաղաքից չէ: Նա սամուրայ[5] էր՝ Կոկուֆուից, որ գտնվում է Վակասայում: Նրա անունը Կանաձավա Տակեխիրո է, նա քսանվեց տարեկան է: Ոչ, նա չէր կարող որևէ մեկի չարությունը իր վրա հրավիրել. նա շատ մեղմ բնավորություն ուներ:
Իմ դո՛ւստրը: Նրա անունը Մասագո է, տասնինը տարեկան է: Նա բնավորությամբ խիզախ է՝ տղամարդուց ոչ պակաս: Տակեխիրոյից առաջ նա երբեք սիրած չի ունեցել: Նա թուխ է, ձախ աչքի անկյան մոտ խալ ունի, դեմքը փոքր է և երկարավուն:
Երեկ Տակեխիրոն աղջկանս հետ ուղևորվեց Վակասա: Ո՞ր մեղքերիս համար մեզ այսպիսի դժբախտություն հասավ: Ի՞նչ է պատահել իմ աղջկան:

---

[5] Սամուրայ – զինվորական կաստա հին Ճապոնիայում:

Փեսայիս ճակատագրի հետ հաշտվել եմ, բայց աղջկաս համար ունեցած տագնապը ինձ հանգիստ չի տալիս: Ես՝ պառավս, աղաչում եմ ձեզ այն ամենի անունից, ինչ որ սուրբ է, խուզարկեք բոլոր անտառները և մարգագետինները, միայն թե գտեք իմ աղջկան: Ի՞նչ չարագործն է այդ ավազակը, Տաձյոմարա էիք ասում, ինչ էիք ասում: Ոչ միայն փեսայիս, այլև աղջկաս... *(Որևէ բառ ասելու ուժ չունենալով, լաց է լինում):*

ՏԱՁՅՈՄԱՐԱՅԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այդ մարդուն ես եմ սպանել: Բայց կնոջը չեմ սպանել: Ո՞ւր է կորել նա: Ինձ էլ հայտնի չէ: Սպանեցեք: Ինչքան էլ տանջեք ինձ, միևնույն է, ես չեմ կարող ասել այն, ինչը չգիտեմ: Քանի որ այսպես դասավորվեց, ես այլևս վախենալու մտադրություն չունեմ և ոչինչ չպետք է թաքցնեմ:

Ես այդ տղամարդուն և նրա կնոջը հանդիպել եմ երեկ, կեսօրից քիչ անց: Ուժեղ քամուց մետաքսե ծածկոցը իսկույն ետ գնաց, և մի ակնթարթ երևաց կնոջ դեմքը: Մի ակնթարթ միայն, երևաց ու անմիջապես էլ նորից ծածկվեց, և գուցե մասամբ դրանից էր, որ դա ինձ բոդհիսատվայի[6] դեմք թվաց: Եվ ես տեղնուտեղը որոշեցի, որ պետք է տիրեմ այդ կնոջը, թեկուզև անհրաժեշտ լինի տղամարդուն սպանել:

Ձեզ սարսափելի՞ է թվում: Դատարկ բան. տղամարդուն սպանելը հասարակ գործ է: Երբ ցանկանում են կնոջը տիրել, տղամարդուն միշտ սպանում են: Միայն թե ես սպանում եմ սրով, որ գոտուս տակ է, իսկ ահա դուք ոչ մեկդ չեք ապավինում սրին, սպանում եք իշխանությամբ, փողով, իսկ երբեմն էլ պարզապես շողոքորթ բառերով: Ճիշտ է, այդ դեպքում արյուն չի թափվում, տղամարդը մնում է կենդանի, բայց համենայն դեպս դուք նրան սպանում եք: Եթե միայն մտածեք, ում մեղքն է ավելի ծանր՝ ձե՞րը, թե իմը, ով գիտե: *(Հեգնական քմծիծաղ):*

Բայց դա չի նշանակում, թե ես դժգոհ եմ լինում, եթե առանց տղամարդկանց սպանելու հաջողվում է կանանց տիրանալ: Իսկ այս անգամ ես ուղղակի որոշեցի առանց արյուն թափելու տիրանալ կնոջը: Միայն թե բանուկ ճանապարհի վրա այդպիսի խաղը գլուխ չի գա: Ուստի մտածեցի, թե ինչպես նրանց երկուսին քաշեմ անտառի խորքը:

Այդ դժվար չեղավ: Ներկայանալով որպես ուղեկից, սկսեցի նրանց պատմել, որ դիմացի լեռան վրա դամբանաբլուր կա, որ ես դա պեղել եմ, այնտեղ գտել եմ շատ սրեր ու հայելի[7] և այդ բոլորը հորել լեռան մոտի անտառում, որպեսզի ոչ ոք չտեսնի, և որ, եթե մուշտարի գտնվի, էժան գնով կվաճառեմ ցանկացած իրը: Տղամարդը սկսեց կամաց-կամաց ենթարկվել խոսքերիս ազդեցությանը: Եվ ի՞նչ եք կարծում: Ճիշտ եմ ասում, ահավոր բան է ընչաքաղցությունը: Չէր անցել նույնիսկ կես ժամ, որ նրանք շրջեցին իրենց ձիու գլուխը և ինձ հետ արահետով ուղղվեցին դեպի լեռը:

Երբ մենք մոտեցանք անտառին, ես ասացի, որ իրերը թաղված են հենց թավուտում և նրանց առաջարկեցի գնալ տեսնել: Ագահությունը տղամարդուն ուտում էր, և նա, իհարկե, չհակառակեց: Բայց կինը ասաց, որ

---

[6] Բոդհիսատվա – բուդդաներին նախորդող աստվածություն: Այստեղ դա համապատասխանում է *հրեշտակային դեմք* արտահայտությանը:

[7] Հայելիները հնում մետաղյա էին:

ինքը ձիուց չի իջնի, կսպասի այդտեղ: Դա նրա կողմից միանգամայն բանական էր, որովհետև նա տեսնում էր, որ անտառը շատ խիտ է: Ամեն ինչ շատ լավ էր գնում, և ես կնոջը մենակ թողնելով, տղամարդուն տարա թավուտ:
Մացառուտի ծայրին միայն բամբուկ էր աճում: Բայց երբ անցանք մոտավորապես կես տյո, կրիպտոմերիաներ էլ պատահեցին: Իմ մտադրության համար դրանից ավելի հարմար տեղ չկար: Ճյուղերը հեռացնելով, ես ճշմարտանման պատմություն էի անում, թե իբր գանձերը թաղված են կրիպտոմերիաների տակ: Տղամարդը ինձ ունկնդրելով՝ արագ առաջ էր գնում, գնում էր այնտեղ, որտեղ երևում էին այդ ծառերի բարակ ցողունները: Բամբուկը ավելի ու ավելի սակավ էր հանդիպում, չորս կողմը արդեն կրիպտոմերիաներ էին բարձրանում, և, հենց այդտեղ էլ ես անակնկալ նետվեցի նրա վրա ու գետին տապալեցի: Մի վայրկյան հետո նա արդեն կապկպված էր ծառին: Ասում եք, որտեղի՞ց պարանը... Ո՞ր ավազակն է առանց պարանի լինում: Պարանը գոտուս տակ էր. չէ որ ցանկապատի վրայից անցնելու համար դա ինձ միշտ պետք է գալիս: Որպեսզի նա չկարողանար գոռգոռալ, հասկանալի է, ես նրա բերանը բամբուկի տերևներ խցկեցի, որից հետո նրանով զբաղվելու հարկ չկար:
Տղամարդու հետ հաշիվը փակելով՝ ես վերադարձա կնոջ մոտ և ասացի, որ նրա ուղեկիցը անակնկալ տկարացել է, և որ հարկավոր է գնալ տեսնել, թե ինչ է պատահել: Ավելորդ է նույնիսկ ասել, որ այս անգամ էլ ես իմն արեցի: Նա հանեց իր լայնեզր գլխարկը և, ձեռքս բաց չթողնելով, քայլեց դեպի անտառի խորքը: Բայց երբ եկանք հասանք այնտեղ, ուր ամուսինը կապված էր ծառից, նա ձեռքը տարավ թևի տակ և մի դաշույն դուրս քաշեց: Դեռ երբեք չէի տեսել այդքան անսանձ ու խիզախ կին: Թե որ զգաստ չլինեի այն ժամանակ, անպայման մահացու վերք կստանայի փորիս: Դրանից ես մի կերպ խույս տվեցի, բայց նա անողոք հարվածներ էր հասցնում, չքաշվելով վիրավորել ուր որ պատահի: Սակայն հո իզուր չի, որ ես Տաձյոմարան եմ: Ինձ վերջապես հաջողվեց, առանց սուրը հանելու, դաշույնը ցած գցել նրա ձեռքից: Իսկ առանց զենքի ամենախիզախ կինն էլ ոչինչ չի կարող անել: Եվ, վերջ ի վերջո, ինչպես և ցանկանում էի, տղամարդուն կյանքից չզրկելով, կարողացա կնոջը տիրանալ:
Այո, տղամարդուն կյանքից չզրկելով: Ես դրանից հետո էլ չէի պատրաստվում նրան սպանել: Բայց երբ ուզեցի անտառից չքվել, թողնելով պառկած կնոջը՝ արցունքն աչքերին, հանկարծ նա խելագարի նման կախվեց թևքիցս և, շնչահեղձ լինելով, բղավեց. «Կամ դուք կմեռնեք, կամ ամուսինս... երկուսիցդ մեկը պետք է մեռնի... Երկու տղամարդու աչքի առաջ խայտառակվելը մահից վատ է... Ձեզանից մեկը պետք է մեռնի... իսկ ես նրա մոտ կգնամ, ով որ կենդանի կմնա»: Եվ ահա այդ ժամանակ էլ ցանկացա սպանել տղամարդուն: *(Մռայլ հուզմունք):*
Այժմ, երբ այս բանն ասացի ձեզ, երևի, թվում է, որ ես դաժան մարդ եմ: Ձեզ, անշուշտ, այդպես է թվում, որովհետև դուք այդ կնոջ դեմքը չեք տեսել: Որովհետև դուք չեք տեսել նրա վառվող աչքերը: Երբ մեր հայացքները հանդիպեցին իրար, ես ցանկացա իմ կինը դարձնել նրան, թեկուզև, կայծակն ինձ տեղնուտեղը շանթի: Իմ կինը դարձնել նրան՝ գլխումս միայն և միայն այդ միտքն էր պտտվում: Ոչ, դա գռեհիկ վավաշոտություն չէր, ինչպես դուք

կարծում եք: Եթե միայն վավաշոտությունը լիներ, ես կնոջը քացով դեն կշպրտեի և կհեռանայի: Այդ դեպքում տղամարդն էլ ստիպված չէր լինի սուրս իր արյունով ներկել: Բայց այն պահին, երբ թավուտի աղջամուղջում դիտեցի կնոջ դեմքը, վճռեցի, որ մինչև տղամարդուն չսպանեմ, չեմ գնա այդտեղից:
Չնայած որոշել էի նրան սպանել, բայց ստորաբար սպանել չէի ուզում: Ես նրա կապերը արձակեցի և ասացի, պետք է մենամարտենք սրերով: Այն պարանը, որ գտել եք ծառի բնի մոտ, հենց իմ շպրտածն է: Տղամարդը այլայլված դուրս քաշեց ծանր սուրը և իսկույն էլ, առանց ծպտուն հանելու, կատաղորեն նետվեց ինձ վրա: Կարիք էլ չկա ասելու, թե ինչով վերջացավ այդ մենամարտը: Քսաներեքերորդ շարժմանը սուրս ծակեց նրա կուրծքը: Քսաներեքերորդ շարժմանը՝ խնդրում եմ չմոռանաք: Դա ինձ մինչև հիմա էլ զարմանք է պատճառում, ամբողջ աշխարհում նա միակն էր, որ քսան անգամ իր սուրը խաչեց իմի հետ: *(Ուրախ ժպիտ):*
Հենց որ նա ընկավ, արյունաշաղախ սուրը ձեռքիս, շրջվեցի դեպի կինը: Բայց, պատկերացնո՞ւմ եք, նա արդեն չկար: Ես նրան սկսեցի փնտրել ծառերի մեջ: Սակայն բամբուկի թափված տերևների վրա որևէ հետք չէր մնացել: Իսկ երբ ես ականջ էի դնում, լսում էի միայն տղամարդու կոկորդից եկող հոգեվարքի խռխռոցը:
Գուցե երբ մենք սկսեցինք մենամարտել, կինը թավուտից ծլկել էր, որպեսզի օգնություն կանչի: Հենց որ դա մտքովս անցավ, ես հասկացա, որ բանը կյանքիս է վերաբերում: Ես սպանվածից վերցրի սուրը, աղեղն ու նետերը և անմիջապես նախկին արահետը դուրս եկա: Այնտեղ կնոջ ձին առաջվա նման խաղաղ խոտ էր պռճոկում: Խոսել այն մասին, թե ինչ եղավ հետո, կնշանակի ջուր ծեծել: Միայն մի բան: Մայրաքաղաք մեկնելուց առաջ այդ սուրը արդեն ինձ մոտ չէր: Ահա և իմ ամբողջ խոստովանությունը: Ամենադաժան պատժի ենթարկեք ինձ. ախր ես միշտ գիտեի, որ օրերից մի օր իմ գլուխը ստիպված կլինի ցցի վրա բարձրանալ: *(Գրգռիչ տեսք):*

ԹԵ ԻՆՉ ԱՍԱՑ ԿԻՆԸ ԿԻՅՈՄԻՁՈՒ ԵԿԵՂԵՑՈՒՄ: ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Տիրանալով ինձ՝ կապույտ զգեստով այն տղամարդը դարձավ կապկպված ամուսնուս և ծաղրանքով հռհռաց: Երևի, շատ ծանր էր ամուսնուս համար:
Բայց նա ինչպես էլ որ գալարվում էր, պարանը միայն ավելի խորն էր մտնում մարմնի մեջ: Ես ինքնաբերաբար ձգվեցի նրա կողմը, ոչ, ես նոր միայն ուզում էի ձգվել, բայց այն տղամարդը ոտքով խփեց ու մի ակնթարթում ինձ գցեց գետին: Հենց այդ ժամանակ էլ դա պատահեց: Այդ պահին ամուսնուս աչքերում մի աննկարագրելի փայլ տեսա: Աննկարագրելի... նույնիսկ այժմ հիշելով այդ աչքերը, ես չեմ կարողանում իմ մեջ դողը խեղդել: Ուժ չունենալով արտաբերել մի հատիկ բառ, ամուսինս հայացքի մեջ զեղեց իր ամբողջ հոգին: Բայց նրա աչքերը ցասում, տառապանք չէին արտահայտում, դրանցում շողշողում էր իմ նկատմամբ սառը մի արհամարհանք, ահա թե ինչ էին արտահայտում դրանք: Ոչ թե այն տղամարդու քացուց, այլ այդ հայացքի սարսափից ինձ կորցրած, ես գոռացի ու ուշաթափ եղա:

Երբ ես ուշքի եկա, կապույտ հագած այն տղամարդը արդեն գնացել էր: Միայն ամուսինս առաջվա նման կապված էր կրիպտոմերիայի բնին: Բամբուկի թափված տերևների վրայից դժվարությամբ բարձրանալով, ես ուշադրությամբ նայեցի նրա դեմքին: Բայց նրա հայացքը գրեթե չէր փոխվել: Նրա աչքերը առաջվա պես արտահայտում էին սառը արհամարհանք և զսպված ատելություն: Չգիտեմ ինչպես ասեմ, թե այն ժամանակ ես ինչ զգացի... և՛ ամոթ, և՛ վիշտ, և՛ ցասում... Օրորվելով ոտքի կանգնեցի և մոտեցա ամուսնուս: «Լսեք: Այն բանից հետո, ինչ որ պատահեց, ես ձեզ հետ այլևս չեմ կարող ապրել: Ես որոշել եմ մեռնել: Բայց... բայց դուք էլ մեռեք: Դուք տեսաք իմ խայտառակությունը: Դրանից հետո ես չեմ կարող ձեզ կենդանի թողնել»:

Մեծ դժվարությամբ, բայց ահա թե ինչ ասացի ես նրան: Եվ, համենայն դեպս, ամուսինս առաջվա նման զզվանքով էր նայում ինձ: Ձսպելով հուզմունքս, որից կուրծքս քիչ էր մնում պայթեր, ես սկսեցի փնտրել նրա սուրը: Բայց, հավանաբար, ավազակը բոլորը հափշտակել էր. ոչ միայն սուրը, այլև նետն ու աղեղը ոչ մի տեղ չէին երևում: Միայն դաշույնն էր, բարեբախտաբար, ոտքերիս մոտ ընկած: Ես վերցրի դաշույնը և մեկ անգամ էլ ասացի ամուսնուս. «Հիմա ես ձեզ կսպանեմ: Եվ իսկույն էլ կսպանեմ ինձ»:

Ամուսինս հազիվհազ շարժեց շրթունքները, երբ լսեց այս խոսքերը: Հասկանալի է, ձայն դուրս չեկավ, որովհետև նրա բերանը խցկված էր բամբուկն տերևներով: Բայց երբ նայեցի նրա շրթունքներին, իսկույն հասկացա, թե ինչ էր ասել: Իմ նկատմամբ ունեցած նույն արհամարհանքով նա արտաբերեց մի բառ. «Սպանի՛ր»: Եվ գրեթե անգիտակցաբար ես դաշույնը խոր մեխեցի նրա կուրծքը, որ ծածկած էր բաց կապույտ զգեստով: Կարծեմ այստեղ նորից գիտակցությունս կորցրեցի: Երբ ուշքի եկա ու շուրջս նայեցի, ամուսինս, առաջվա նման կապկպված, այլևս չէր շնչում: Բամբուկի բներին փաթաթված կրիպտոմերիաների խիտ ճյուղերի արանքից նրա գունատ դեմքին ընկավ մայր մտնող արևի ճառագայթը: Հեկեկանքս զսպելով՝ ես դիակի վրայից արձակեցի պարանը: Եվ հետո... ի՞նչ պատահեց հետո: Խոսելու ուժ չունեմ այլևս: Ինչ էլ որ անում էի, մեռնելու վճռականություն չէի գտնում իմ մեջ: Ես դաշույնը մոտեցնում էի կոկորդիս, ջանում էի խեղդվել լեռան ստորոտի լճակում, փորձում էի... Բայց ահա չմեռա, մնացի կենդանի և դրանով չեմ կարող հպարտանալ: *(Տխուր ժպիտ):* Գուցե գթասիրտ, կարեկցող աստվածուհի Կաննոն երես դարձրեց այնպիսի փուչ էակից, ինչպիսին ես եմ: Բայց հիմա ես ի՞նչ անեմ, ես, որ սպանել եմ իմ ամուսնուն, անարգվել եմ ավազակի կողմից, ես ի՞նչ անեմ: Ես ինչ... Ես... *(Միանգամից հուսակտուր հեկեկանքներ):*

ԹԵ ԻՆՉ ԱՍԱՑ ՍՊԱՆՎԱԾԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ ԳՈՒՇԱԿՈՒՀՈՒ ՇՐԹՈՒՆՔՆԵՐՈՎ

Տիրանալով կնոջս՝ ավազակը նստեց և սկսեց նրան հանգստացնել: Իմ բերանը, պարզ է, խցկված էր: Ես կապված էի ծառի բնին: Բայց ամբողջ ժամանակ կնոջս աչքով-ունքով նշաններ էի անում. «Մի՛ հավատա նրան: Ինչ ասում է՝ սուտ է»: Ահա թե ինչ էի ուզում նրան հասկացնել: Բայց կինս, թափված տերևների վրա տխուր նստած, իր ծնկներից աչքը չէր բարձրացնում: Ճիշտ է, կարելի էր ենթադրել, որ նա ուշադիր լսում է

ավազակի խոսքերը: Ես խանդից գալարվում էի: Իսկ ավազակը խոսքը ճարպկությամբ նպատակին էր հասցնում: Մեկ անգամ անարատությունը կորցնելուց հետո՝ ամուսնու հետ յոլա գնալը դժվար կլինի: Ավելի լավ չի՞ լինի իր՝ ավազակի կինը դառնալ, քան այդպես մնալ ամուսնու հետ: Չէ՞ որ նա անվայել արարքի դիմեց հատկապես այն պատճառով, որ կինը դուր էր եկել իրեն... Ահա թե ինչ աստիճան հանդուգն էր խոսում նա:
Ավազակին լսելով՝ կինս վերջապես դեմքը մտախոհ բարձրացրեց: Ես երբեք նրան այդպես գեղեցիկ չէի տեսել: Բայց ի՞նչ պատասխանեց ավազակին իմ գեղեցկուհի կինը, երբ ես՝ կապկպվածս, նրա կողքին էի: Այժմ ես դեգերում եմ չգոյության մեջ, սակայն ամեն անգամ, հենց որ հիշում եմ նրա այդ պատասխանը, զայրույթը այրում է ինձ: Ահա թե ինչ ասաց կինս. «Դե, ուրեմն, տարեք ինձ, ուր որ ուզում եք»: *(Երկար լռություն):*
Բայց նրա մեղքը միայն դրանում չէ: Այդ մեկի պատճառով ես, երևի, խավարում թափառելով, այսպես չէի տանջվի: Ահա թե ինչ կատարվեց, կինս, ինչպես երազում, հետևեց ավազակին, որը նրան թևանցուկ էր արել, և արդեն պատրաստվում էր դուրս գալ անտառից, երբ հանկարծ անասելի գունատվելով, մատնացույց արեց ինձ՝ ծառին կապկպվածիս: «Սպանեք դրան: Ես չեմ կարող ձեզ հետ լինել, քանի դեռ նա կենդանի է...»,— մի քանի անգամ խելագարի պես աղաղակեց նա: «Սպանեք դրան», այս բառերը դեռ հիմա էլ փոթորկի նման քշում են ինձ դեպի խավարի խորխորատները: Արդյոք երբևիցե այդպիսի նողկալի բառեր դուրս եկե՞լ են մարդկային շրթունքներից: Արդյոք այդպիսի զզվելի բառեր երբևէ հասե՞լ են մարդկային լսելիքին: Արդյոք թեկուզ երբևէ... *(Կծու քրքիջի անակնկալ պոռթկում):* Այդ խոսքերի վրա նույնիսկ ավազակը գունատվեց: «Սպանե՛ք դրան»,— նրա թևքից կառչած, գոռում էր կինս: Ակնապիշ նրան նայելով՝ ավազակը ոչ հա ասաց, ոչ էլ՝ չէ, և հանկարծ քացով խփեց գցեց նրան թափթփված տերևների վրա: *(Նորից կծու քրքիջի պոռթկում):* Ձեռքերը խաչելով կրծքին՝ նա դարձավ դեպի ինձ: «Ինչպե՞ս վարվել այս կնոջ հետ: Սպանե՞լ, թե ներել: Պատասխան տալու համար՝ գլխով անել: Սպանե՞լ»: Միայն այդ բառերի համար ես պատրաստ եմ ամեն ինչ ներել երան: *(Կրկին երկար լռություն):*
Մինչ ես տատանվում էի, կինս հանկարծ բղավեց ու նետվեց թավուտի խորքը: Ավազակը նույն վայրկյանին ընկավ նրա հետևից, բայց, ինչպես երևում էր, չկարողացավ հասնել: Ինձ թվում էր, թե այդ բոլորը զառանցանքի մեջ եմ տեսնում:
Երբ կինս փախավ, ավազակը վերցրեց իմ սուրը, նետերն ու աղեղը և մի տեղից կտրեց վրայիս պարանը: Հիշում եմ, թե ինչպես անտառից ծլկելով նա փնթփնթաց. «Հիմա պետք է քո մասին էլ մտածես ախպերս»:
Երբ նա հեռացավ, շրջապատում ամենուրեք լռություն տիրեց: Ո՛չ, ոչ ամենուրեք, կողքիս լսելի էր ինչ-որ մեկի հեկեկանքը: Պարանը քանդելով՝ ես ուշադիր ականջ դրեցի: Եվ ի՞նչ: Ես հասկացա, որ այդ ինքս եմ հեկեկում: *(Երրորդ անգամ երկար լռություն):*
Վերջապես, ես դժվարությամբ ծառաբնից անջատեցի չարչարված մարմինս: Իմ առջև փայլում էր դաշույնը, որ կինս էր վայր գցել: Ես դա վերցրի և մի արագ շարժումով խրեցի կուրծքս: Եվ զգացի, թե ինչպես արյան ինչ-որ կծիկ գլորվեց դեպի կոկորդս, բայց դրանում տանջալից ոչինչ չկար: Երբ կուրծքս սառեց, շուրջս ավելի խոր լռություն իջավ: Օ՜, ինչպիսի լռություն էր: Այդ

լեռնային անտառում չէր դայլայլում ոչ մի թռչուն: Միայն կրիպտոմերիայի ու բամբուկի ճյուղերի վրա վառվում էին մայր մտնող արևի տխուր ճառագայթները: Մայր մտնող արևի… բայց և նրանք էլ կամաց-կամաց աղոտանում էին: Ոչ ծառերը և ոչ էլ բամբուկը այլևս չէին երևում: Եվ ինձ, որ փռված էի գետնին, պարուրեց մի խոր անդորրություն:
Եվ ահա այդ ժամանակ ինչ-որ մեկը գաղտագողի մոտեցավ ինձ: Ես ուզեցի տեսնել, թե ով է: Բայց աղջամուղջը շուրջս ամեն ինչ ծածկեց: Եվ ինչ-որ մեկը… այդ ինչ-որ մեկը իմ կրծքից անտեսանելի ձեռքով հանեց դաշույնը: Նույն պահին բերանս նորից լցվեց հորդող արյունով: Եվ դրանից հետո ես առհավետ ընկղմվեցի չգոյության խավարի մեջ:
1922